Սերգեյ Դովլաթով

Գնդապետն ասում է՝ սիրում եմ

Մեր աշխարհն անհեթեթ է, ասում եմ կնոջս, ու մարդու թշնամին տնեցիք են իր:

Կինս բարկանում է, չնայած կատակով եմ ասում:

Ի պատասխան լսում եմ .

Քո թշնամին էժանանոց պորտվեյնն ու ներկված շիկահերներն են:

Ուրեմն ես ճշմարիտ քրիստոնյա եմ: Քանզի Քրիստոս ուսուցանում էր սիրել թշնամիներին:

Այս խոսակցությունը շարունակվում է արդեն քսան տարի: Համարյա քսան տարի…

Ես Ամերիկա եկա ապահարզանի երազանքով: Բաժանվելու միակ պատճառը կնոջս ծայրահեղ անվրդովությունն էր: Նրա հանգստությունը սահման չունի:

Ապշեցուցիչ է, թե ինչպես կարող են մարդու մեջ մեկտեղվել հանդարտությունն ու հակակրանքը…

Մենք ծանոթացանք վաթսուներեք թվին: Բանն այսպես եղավ:

Ես առանձին մուտքով սենյակ ունեի: Պատուհանները նայում էին աղբանոցին: Համարյա ամեն օր ընկերներս հավաքվում էին ինձ մոտ:

Մի անգամ արթնացա կեսգիշերին: Տեսա անկվա ամանների կույտը սեղանին ու շուռ տված բազկաթոռը: Զուգելով մտաբերեցի նախորդ օրվա անցուդարձը: Հիշում եմ՝ երեք անգամ վազեցի օդի բերելու: Ինչ-որ մեկը այսպես արտահայտվեց .

«Գնանք Ելիսեեյան: Մինչեւ էնտեղ երեք հարյուր մետր է, հետ գալն էլ՝ մոտավորապես էդքան…»:

Սկսեցի միտք անել թափթփած սենյակում նախաճաշելու մասին:

Հանկարծ զգում եմ՝ մենակ չեմ: Բազմոցին, սառնարանի ու ռադիոլայի արանքում, քնած մարդ կա: Շրշյուններ ու հոգոցներ են լսվում: Հարցրի .

Դուք ո՞վ եք:

Ասենք թե՝ Լենան, պատասխանեց անսպասելիորեն հանգիստ կանացի ձայնը:

Մտքի մեջ ընկա: Լենա անունը այնքան էլ հաճախ չի հանդիպում: Ծանոթներիս մեջ գերակշռում էին Թամարաներն ու Լարիսաները: Հարցրի .

Իսկ ի՞նչ կարգավիճակում եք էստեղ, Լե՛նա: Ավելի պարզ՝ ո՞րն է ձեր սոցիում էռ ակտումը:

Լռություն տիրեց: Հետո հանգիստ կանացի ձայնն ասաց .

Ինձ Գուրեւիչն է մոռացել…

Գուրեւիչը գրքի շուկայի ծանոթներիցս էր: Երկու տարի անց նստացրին:

Ո՞նց թե՝ մոռացել է:

Գուրեւիչը հարբել էր, տաքսի կանչեց…

Սկսեցի ինչ-որ բան մտաբերել:

Դարչնագույն շորո՞վ էիք:

Ընդհանուր առմամբ՝ հա: Կանաչ շորով: Գուրեւիչը պատռեց: Ինչ-որ մեկի գիմնաստյորկայով եմ քնել:

Բանակիս բլուզն է: Այսպես ասած՝ մասունք: Գնալիս հանեք:

Էստեղ ինչ-որ շքանշան կա:

Մարզական կրծքանշան է, ասում եմ:

Ի՞նչ էլ ծակում է… Չթողեց քնեմ…

Նրան, ասում եմ, կարելի է հասկանալ…

Վերջապես հիշեցի այդ կնոջը: Նիհար, գունատ, մոնղոլական աչքերով:

Այդ ընթացքում լույսը բացվեց:

Շրջվեք, խնդրեց Լենան:

Մռութս ծածկեցի թերթով: Ակուստիկան անմիջապես փոխվեց: Օրիորդը գնաց դեպի դուռը: Ոտնաձայնից դատելով՝ իմ վելվետե հողաթափերն էր հագել:

Դուրս եկա ծածկոցի տակից: Օրը տարօրինակ ու խորհրդավոր էր սկսվում:

Հետո՝ անճարակ իրարանցում միջանցքում: Ոչ այնքան բարակ ազդրերիս փաթաթած ցամքոց: Ծնկներին չհասնող զինվորական վերնաշապիկ…

Ոչ առանց դժվարության ճանապարհ տվինք իրար: Ես մտա լոգարան: Ցնցուղից հետո մի կյանքում հարաբերական պարզություն է հաստատվում:

Դուրս եմ գալիս երեք րոպեից . սեղանին սուրճ է, թխվածք, ջեմ: Չգիտես ինչու՝ դոնդողաձուկ…

Այդ ընթացքում Լենան արդեն հագնվել էր: Օձիքի անտիկ բացվածքը՝ Ֆիմա Գուրեւիչի անսանձ զգայականության հետքը՝ սազում է նրան:

Ճիշտ որ, ասում եմ, կանաչ է…

Դեսուդենից խոսելով՝ նախաճաշեցինք: Ամեն ինչ լավ էր, թեթեւ ու նույնիսկ հաճելի: Ընդհանրական խելագարության ինչ-որ ուղղվածությամբ…

Լենան վերցրեց պայուսակը, կոշիկները հագավ ու ասում է .

Ես գնացի:

Շնորհակալ եմ հաճելի առավոտի համար:

Հանկարծ լսում եմ:

Վեցի կողմերը կգամ:

Լա՛վ, ասում եմ…

Մի դեպք հիշեցի: Ընկերոջս հետ գալիս ենք բաղնիքից: Միլիցիոները կանգնեցրեց: Լարվեցինք, հարցնում ենք .

Ի՞նչ է պատահել:

Իսկ նա ասում է .

Չե՞ք հիշում՝ երբ է տպվել Ախմատովայի «Համրիչը»:

Հազար ինը հարյուր տասնչորս թվին: «Հիպերբորեյ» հրատարակչություն, Սանկտ-Պետերբուրգ:

Շնորհակալ եմ: Կարող եք գնալ:

Ո՞ւր, հարցնում ենք:

Ուր կուզեք, պատասխանում է: Ազատ եք…

Ինձ այն ժամանակ ապշեցրեց առօրեականության ու խելագարության խառնուրդը: Ու հիմա էլ մոտավորապես այդպիսի զգացողություն էր:

Կգամ, ասում է, վեցի կողմերը…

Իսկ ես հինգ անց կեսին ժամադրության եմ: Ընդ որում, նույնիսկ ոչ կնոջ հետ, այլ՝ Բրոդսկու: Հետո՝ բանկետ ինչ-որ մեկի պաշտպանության առթիվ:

Զանգում, հետաձգում եմ ժամադրությունը: Տաքսիով սլանում եմ տուն: Երեւի, մտածում եմ, պետք է երկրորդ բանալի պատվիրել:

Սպասում եմ: Գալիս է վեցին մոտ: Բացում է մթերապայուսակը, իսկ այնտեղ պահածոներ են, ձու, ձուկ:

Դուք, ասում է, ձեր գործերով զբաղվեք: Իսկ ես ուտելիք կպատրաստեմ:

Այդ պահին մի խելագար միտք ծնվեց: Հանկարծ ու՝ ինչ-որ մեկի հետ շփոթում է: Որեւէ հարազատ ու թանկ մարդու հետ: Հանկարծ ու՝ աշխարհի խենթությունն այսքան հեռու է գնացել…

Ընթրեցինք: Նստեցի գրելու: Լենան ամանները լվաց: Միացրեց հեռուստացույցը:

Հեռուստացույցս երկու տարի չէր աշխատում: Ու հիմա հանկարծ աշխատեց, ոնց որ նոփ-նոր լիներ…

Սկսեցի ինչ-ինչ փոփոխություններ նկատել: Լվացարանի գլխին արտասահմանյան սրվակներ հայտնվեցին: Իմ զգեստապահարանում թավշակաշվե ինչ-որ բան կախվեց: Սառնարանի կողքին հաստատվեցին բաց դարչնագույն կարճաճիտք կոշիկները: Նույնիսկ բնակարանի հոտն էր փոխվել:

Իջավ երեկոն: Լենան ասում է .

Ձեզ թե՞յ, թե՞ սուրճ:

Թեյ:

Ինչ-որ քաղցրաբլիթներով թեյ խմեցինք: Մինչ այդ երեսուն տարի կլիներ՝ քաղցրաբլիթ չէի կերել…

Նայեմ՝ գիշերվա մեկն է: Երեւի արդեն պետք է քնել: Լենան ասում է .

Սպասեք խոհանոցում:

Նստել՝ ծխում եմ: Կարդացի անցած երեքշաբթվա թերթը: Մտնում եմ սենյակ՝ քնած է: Նույն բազմոցին: Միայն թե գիմնաստյորկայիս փոխարեն՝ ինչ-որ վարդագույն բանով:

Պառկեցի: Ականչ եմ դնում՝ ոչ մի ձայն: Գոնե կոտրատվեր մի քիչ՝ քնի մեջ շարժվեր…

Սպասեցի տասը րոպե ու ես էլ քնեցի:

Առավոտյան՝ ամեն ինչ սկզբից: Թեթեւ իրարանցում, ցնցուղ ու կաթով սուրճ:

Այսօր, ասում է, կուշանամ… Կգամ տասնմեկից հետո: Այնպես որ, չանհանգստանաք…

Գնացի խմբագրություն: Այնտեղից՝ Ժուռնալիստների միության բար: Ինչ-որ շվեդուհու հետ ծանոթացա . հյուրանոց էր կանչում: Մի գլուխ կրկնում էր .

Կազա՛կ, ինձ ռուսական օղի լցրու…

Ընկերներս պատրաստվում էին գնալ ինչ-որ ավանգարդիստի ընդհատակյան համերգին: Ընդ որում, բավական տարօրինակ ավանգարդիստ էր, եթե կարելի է այդպես արտահայտվել: Պառկած էր թավջութակ նվագում… Մի խոսքով՝ լիքը գայթակղություններ: Իսկ ես տուն եմ շտապում: Շտապում եմ իմ խելագարանոցը:

Երեկոյան սպասեցի գա ու ասում եմ .

Լենա, եկեք խոսենք: Կարծում եմ՝ բացատրվելու կարիք կա: Ինչ-որ անհասկանալի բան է կատարվում: Ես մի քանի նրբանկատ հարց ունեմ: Թույլ կտա՞ք՝ առանց ձեւականությունների:

Լսում եմ, ասում է:

Իսկ դեմքը հանգիստ է ամբարտակի պես:

Հարցնում եմ .

Դուք ի՞նչ է, ապրելու տեղ չո՞ւնեք:

Օրիորդը մի քիչ նեղացավ: Ավելի ճիշտ՝ փոքր-ինչ զարմացավ .

Ինչի՞ չունեմ: Բնակարան ունեմ Ամառանոցայինում: Իսկ ինչո՞ւ եք հարցնում:

Չէ՛, բան չկա… Ինձ թվաց… Կարծում էի… Էդ դեպքում՝ մի հարց էլ: Ջուտ ընկերական… Հազար ներողություն… Գուցե ես ձեզ դո՞ւր եմ գալիս:

Լռություն տիրեց: Զգում եմ, որ կարմրում եմ: Վերջապես ասաց .

Ձեր դեմ բողոք չունեմ:

Այդպես էլ ասաց . բողոք, ասում է, չունեմ:

Ավելի ծանր լռություն տիրեց: Ինձ համար ծանր: Նա տոգորված էր անվրդովությամբ: Հայացքը՝ պաղ ու պինդ, ճամպրուկի անկյունակի պես:

Այստեղ մտքի մեջ ընկա: Գուցե նրա հանդարտությունը սեռային տարբերակումից բա՞րձր է: Տղամարդու հանդեպ կենսաբանական հակումից բարձր: Մշտաբնակության բուն գաղափարից բարձր…

Ինչ կա որ, մտածում եմ: Համենայն դեպս, նկատելի մարդ եմ, անզուսպ: Բավական շատ եմ խմում: Ավելորդ բաներ խոսում: «Գերմանական ալիքն» է ինձ հիշատակել… Գուցե այս ֆանտաստիկ տիկնոջը կցել են սկսնակ այլախոհի՞ն…

Մտածում եմ՝ ասեմ, կսկսի զոռալ: Իսկ եթե իրավացի եմ՝ ավելի բարձր…

Լսում եմ .

Չէ՛, վարսավիրանոցում եմ աշխատում…

Ու հետո .

Եթե էլ հարցեր չկան, եկեք թեյ խմենք:

Ամեն ինչ հենց այդպես էլ սկսվեց: Ցերեկները վազվզում էի՝ որեւէ ձախ գործ գտնեմ: Վերադառնում էի անտրամադիր, նվաստացած ու չար: Լենան հարցնում էր .

Ձեզ թե՞յ, թե՞ սուրճ:

Համարյա չէինք խոսում: Ընդամենը կարճ գործնական տեղեկատվության փոխանակում էր: Օրինակ, նա հայտնում էր .

Ձեզ ինչ-որ Բեսկին էր զանգել:

Կամ .

Որտե՞ղ եք պահում լվածքի փոշին:

Իմ գործերը նրան չէին հետաքրքրում: Ես էլ ոչինչ չէի հարցնում:

Խելագարությունն ամենօրյա, առտնին, կայուն ձեւեր առավ:

Ապրելակերպս մի քիչ փոխվեց: Երկրպագուհիներս ավելի ու ավելի քիչ էին զանգում: Ասենք, ի՛նչ զանգել, երբ անվրդով կանացի ձայն է պատասխանում:

Մենք բացարձակապես անծանոթ էինք իրար:

Լենան աներեւակայելիորեն լռակյաց ու հանդարտ էր: Բայց դա փչացած բարձրախոսի ճնշող լռություն չէր: Ոչ էլ հակատանկային ականի սպառնալից հանդարտություն: Ծառասաղարթին անտարբեր ականջող արմատի լուռումունջ խաղաղություն էր…

Անցավ մի շաբաթ: Շաբաթ երեկոյան չդիմացա: Ասում եմ… Չէ՛, գոռացի .

Լե՛նա: Լսե՛ք: Թույլ տվեք լրիվ անկեղծ լինել: Մենք ամուսնական կյանք ենք վարում… Բայց առանց ամուսնական կյանքի գլխավոր տարրի… Տնտեսություն ունենք… Դուք լվածք եք անում… Բացատրեք՝ ի՞նչ է նշանակում այս ամենը… Քիչ է մնում խելագարվեմ…

Լենան ինձ հառեց անվրդով, բարյացակամ հայացքը .

Ես ձեզ խանգարո՞ւմ եմ: Ուզում եք գնա՞մ:

Չգիտեմ՝ ինչ եմ ուզում: Ուզում եմ հասկանամ… Սերը հասկանում եմ: Անառակությունը հասկանում եմ… Ամեն ինչ, բացի այս կանոնակարգված խելագարությունից… Եթե պետանվտանգության գործակալ լինեիք, ամեն ինչ կարգին կլիներ… Նույնիսկ կուրախանայի… Դրա մեջ տրամաբանություն կնշմարվեր… Իսկ էսպես…

Լենան լռեց՝ լռեց ու ասում է .

Եթե պետք է, ասեք՝ կգնամ:

Հետո՝ մոնղոլական աչքերը մի քիչ խոնարհելով . Եթե ձեզ դա է պետք, խնդրե՛մ:

Այսինքն՝ ի՞նչը:

Թարթիչներն ավելի իջան: Ձայնն ավելի հանդարտ էր հնչում: Ես լսեցի:

Ինտիմ շփման իմաստով:

Չէ՛, ասում եմ, ինչի՞ համար…

Մի՞թե կհամարձակվեմ, մտածում եմ, այդպես կոպիտ խռովել այս հանդարտությունը:

Երկու շաբաթ էլ անցավ: Եվ ինձ փրկեց օրին: Քեֆ էի անում մի առաջադիմական խմբագրությունում: Տուն եկա գիշերվա մեկի կողմերը: Ու, ոնց ավելի լավ արտահայտվեմ՝ կորցրի զգաստությունս… Ոտնձգեցի… Գնացի ապագա կալանավոր Գուրեւիչի խոտոր ճանապարհով…

Իմ նետած քարը պառկեց օվկիանոսի հատակին:

Դա սեր չէր: Առավել եւ՝ րոպեական թուլություն: Քաոսից պաշտպանվելու փորձ էր:

Մենք նույնիսկ «դու»-ի չանցանք:

Իսկ մի տարի անց ծնվեց աղջիկս՝ Կատյան: Այդպես էլ ծանոթացանք…

Որպես ամուսին՝ ես կասկածելի ձեռքբերում էի: Տարիներ շարունակ մշտական աշխատանք չունեի: Օժտված էի որակազրկված ցլամարտիկի խունացած արտաքինով:

Պատմվածքներս չէին տպում: Ավելի ու ավելի չար ու պակաս զգուշավոր էի դառնում: Յոթանասուն թվի ամռանը առաջին ձեռագրերս գնացին Արեւմուտք:

Օտարերկրյա ծանոթներ հայտնվեցին: Նստում էին մինչեւ ուշ գիշեր: Հաճույքով օղի էին խմում՝ վրայից լյարդութոքի երշիկ ծամելով:

Կոմունալ հարեւան Տիխոմիրովը սպառնալից քրթմնջում էր .

Ա՜յ թե ծանոթներ ունեք: Իսկը Մինյավսկի ու Դանիել…

Նույն տարվա աշնանը ինձ նորից հիշատակեցին արեւմտյան ռադիոկայանները:

Լենային իմ պատմվածքները չէին հետաքրքրում: Նրան ընդհանրապես չէր հետաքրքրում գործունեությունը որպես այդպիսին: Այդ սահմանափակությունն ինձ նրա անսահման հանգստության մասն էր թվում:

Իմ կյանքում, այսպիսով, իշխում էին երկու հակամարտող տարերքներ: Ձախից մոլեգնում էր սաղմնավորվող նոնկոնֆորմիզմի օվկիանոսը: Աջից քաղքենիական բարօրության անդրդվելի հարթությունն էր փռվել:

Այդպես էլ սոթ տալով՝ դեգերում էի երկու օվկիանոսների արանքում՝ նեղլիկ հողաշերտով:

Լենան այդ ընթացքում հեռացավ իր վարսավիրանոցից: Աշխատանքի տեղավորվեց «Սովետական գրող» հրատարակչությունում, որպես սրբագրիչ: Ինձ համար անակնկալ էր: Չգիտեի էլ, որ այդքան գրագետ է: Ինչպես որ շատ այլ բաներ չգիտեի: Ու մինչ օրս էլ չգիտեմ…

Մի տարի անց նա կոնֆլիկտ ունեցավ իշխանությունների հետ: Բանն այսպես եղավ:

Հրատարակչությունը տպել էր Ախմատովայի գիրքը: Չէր ճարվում: Աշխատակիցներին սահմանափակ թվով օրինակներ հասան: Ոմանց ընդհանրապես անտեսեցին: Այդ թվում՝ կնոջս:

Լենան գնաց հրատարակչության տնօրենի մոտ: Արտահայտեց իր բողոքը: Կոնդրաշովն ի պատասխան, ձայնն իջեցնելով, ասաց .

Քաղաքական բարդ ենթատեքստը չեք ընկալում: Տպաքանակի մեծ մասն ուղարկվել է արտասահման: Մենք պարտավոր ենք փակել բուրժուական քարոզչության բերանը:

Իմ բերանը փակեք, խնդրել էր Լենան…

Այդպես մեր միջեւ այլախոսական մասնակի փոխըմբռնում հաստատվեց:

Տարիներն անցնում էին: Մեր աղջիկը մեծանում էր: Իմ ճապոնական տրանզիստորը նկատի ունենալով՝ ասում էր .

Ես քո «բիբիսին» պատուհանի գոգին եմ դրել…

Աղքատ էինք ապրում, հաճախ վիճում էինք: Ես ափերից դուրս էի գալիս, կինս լռում էր:

Լռությունը մեծ ուժ է: Այն, որպես կենսաբանական զենք, պետք է արգելել…

Ես շարունակ բողոքում էի հեռանկարի բացակայությունից: Լենան ասում էր .

Երկու հազար պատմվածք գրի: Կարող է գոնե մեկը տպե՞ն…

Մտածեցի՝ ի՞նչ է խոսում: Ինձ ի՞նչ օգուտ մի պատմվածքից:

Նույնիսկ նեղացա:

Իզո՛ւր…

Տարբեր էին մեր ընդգրկումներն ու համամասնությունները: Ես շեշտը դնում էի միավորի վրա: Լենան շեշտադրում էր քանակությունը:

Նա իրավացի էր: Հաղթել կարելի է միայն քանակով: Ամբողջ համաշխարհային պատմությունը դա է ապացուցում…

Ես այնքան քիչ գիտեի կնոջս մասին, որ շարունակ զարմանում էի: Ինձ ապշեցնում էր նրա հանդարտության ցանկացած խաթարում…

Մի անգամ լաց եղավ, որովհետեւ նվաստացրել էին տնային կառավարչությունում: Անկեղծ ասած՝ նույնիսկ ուրախացա: Ուրեմն ինչ-որ բան կարող է նրա կիրքն արթնացնել…

Բայց դա հազվադեպ էր պատահում: Առավել հաճախ անդրդվելի էր…

Յոթանասունական թվերին սկսվեց վտարանդությունը: Մեկնում էին մեր մտերիմ ընկերները: Այդ թեմայով անվերջանալի խոսակցություններ էին գնում: Իսկ ես շարունակ պնդում էի .

Էնտեղ ի՞նչ ունեմ անելու: Հայրենի տնից փախչելն անհեթեթ է: Եթե գրականությունը դատապարտելի զբաղմունք է, ուրեմն բանտն է մեր տեղը…

Լենան լռում էր: Կարծես ավելի լռակյաց էր դարձել:

Օրերը ձգվում էին անվերջանալի տրտում կերուխումով, հաճախակի հրաժեշտներով ու գիշերային զրույցներով…

Լավ եմ հիշում այդ փետրվարյան օրը: Լենան աշխատանքից եկավ ու ասում է .

Վե՛րջ… Գնո՛ւմ ենք… Զզվեցի՛նք…

Փորձեցի առարկել: Խոսում էի հայրենիքի մասին, Աստծո, սոցիալական բարձր ճնշման առավելությունների, լեզվական ու գուներանգային ներդաշնակության… Նույնիսկ կեչիները հիշատակեցի, ինչը ինձ մինչ ի մահ չեմ ների…

Բայց Լենան արդեն գնացել էր ինչ-որ մեկին զանգելու:

Ես բարկացա ու մի ամսով մեկնեցի Պուշկինյան արգելոց: Վերադառնում եմ՝ Լենան ինչ-որ թղթեր է տալիս ստորագրելու: Հարցնում եմ .

Արդե՞ն:

Հա, ասում է, ամեն ինչ որոշված է: Փաստաթղթերն արդեն մոտս են: Վստահ եմ, որ մեզ բաց կթողեն: Հնարավոր է՝ երկու շաբաթվա ընթացքում:

Շփոթվեցի: Չէի մտածել, որ այդքան արագ կկատարվի: Ավելի ճիշտ, հույս ունեի, թե Լենան կսկսի համոզել ինձ:

Չէ՞ որ ես ատում էի սովետական վարչակարգը: Չէ՞ որ ի՛մ պատմվածքները չէին տպում: Չէ՞ որ ես էի համարյա այլախոհը…

Մինչեւ վերջին օրը մի տեսակ կարկամած էի: Մեքենայաբար կատարում էի անհրաժեշտ գործողությունները: Դիմավորում ու ճանապարհում էի հյուրերին:

Եկավ մեկնելու օրը: Օդանավակայանում ահագին մարդ էր հավաքվել: Գլխավորապես իմ՝ խմել սիրող ընկերները:

Հրաժեշտ տվինք իրար: Լենան կատարելապես անվրդով էր թվում: Իմ ազգականներից մեկը նրան սեւ աղվեսի մորթի նվիրեց: Հետո երկար ժամանակ երազիս տեսնում էի աղվեսի երախաբաց կերպարանքը…

Աղջիկս անճոռնի էժանագին կիսակոշիկներով էր: Մոլորված տեսք ուներ: Այդ տարի ընդհանրապես տգեղ էր:

Հետո նրանք նստեցին ավտոբուս:

Սպասեցինք՝ երբ օդ կբարձրանա ինքնաթիռը: Բայց ինքնաթիռներն իրար հետեւից թռչում էին: Ու դժվար էր հասկանալ՝ որն է մերը…

Կարոտել սկսեցի օդանավակայանից վերադառնալիս: Արդեն տաքսիում խմում էի շշից: Վարորդն ասում էր .

Կռացե՛ք:

Ես պատասխանում էի .

Կռացած՝ չի՛ գալիս…

Այդ ժամանակից կյանքս փոխվեց: Ինձ պատեց անհանգստությունը: Մտածում էի միայն վտարանդվելու մասին: Խմում ու մտածում էի:

Լենան բացիկներ էր ուղարկում: Ասես գաղտնագրված զեկուցագրեր լինեին .

«Հռոմը մեծ, գեղեցիկ քաղաք է: Ցերեկները շոգ է լինում: Երեկոները երաժշտություն կա: Կատյան լավ է: Գները համեմատաբար ցածր են…»:

Բացիկները լեցուն էին հանգստությամբ: Մայրս կարդում ու վերընթերցում էր: Բոլորը փորձում էին ինչ-որ զգացմունքներ գտնել: Բայց ես գիտեի, որ ապարդյուն է…

Հետագա իրադարձությունները շարադրում եմ կետագծով:

Պորտաբուծության ու որջ պահելու մեղադրանք… Քննիչ Միխայլովը… Ինչ-որ աղոտ ծեծուջարդ միլիցիայում… «Գերմանական ալիքի» հաղորդումների շարքը… Կալանավորում ու դատ Տոլմաչովյան փողոցում… Ինը օր Կալյաեւի բանտում… Անսպասելի ազատություն… ՕՎԻՐ…

ՕՎԻՐ-ի գնդապետը քաղաքավարի ու բարեկամաբար ասաց .

Պետք է մեկնեք: Ձեր կինը մեկնել է, ու վաղուց ձեր ժամանակն էլ է…

Ջուտ հակադրվելու համար առարկեցի .

Մենք, ասում եմ, գրանցված չենք:

Դա ձեւականություն է, լայն ժպտաց գնդապետը, իսկ մենք ձեւապաշտներ չենք: Դուք նրանց սիրում եք, չէ՞:

Ո՞ւմ՝ նրանց:

Ձեր կնոջն ու աղջկան… Իհարկե, սիրում եք…

Կնոջս ու աղջկաս հանդեպ սերն այդպիսով դարձավ փաստ: Ու դա վկայեց ՆԳ գնդապետը…

Ես փորձում էի կողմնորոշվել: Աշխարհում կար երկու իրական բեւեռ: Հստակ, հարազատ, խեղդող՝ «այստեղ», եւ անհայտ, խորհրդավոր, կիսաֆանտաստիկ «այնտեղ»: Այստեղ տառապագին կյանքի անծայրածիր հեռաստաններն էին՝ բարեկամների ու թշնամիների շրջանում: Այնտեղ՝ միայն կինս, նրա անվրդով հանգստության պստիկ կղզյակը:

Իմ բոլոր հույսերն այնտեղ էին: Չգիտեմ՝ ինչի էի ՕՎԻՐ-ի գնդապետի գլուխը տանում…

Վեց շաբաթ անց մենք Ավստրիայում էինք: Վիեննան ասես Լենինգրադի շրջաններից լիներ: Ինչ-որ տեղ՝ Ֆոնտանկայի ու Սադովայայի արանքում:

Քաղաքային բնապատկերի միակ լուրջ բաղադրիչը գետն էր: Երրորդ թե չորրորդ օրը պարզվեց, որ Դանուբն է:

Տեղավորվեցինք «Ծովակալ» հյուրանոցում: Մայրս օրեր շարունակ Սոլժենիցին էր կարդում: Ես ինչ-որ բան էի գրում վտարանդական հանդեսների ու թերթերի համար: Գերազանցապես նկարագրում էի գոյություն չունեցող այլախոհական սխրանքներս:

Այդ ընթացքում Լենան արդեն տեղափոխվել էր Ամերիկա: Նրա նամակներն ավելի ու ավելի համառոտ էին դառնում .

«Մեքենագրուհի եմ: Կատյան դպրոց է գնում: Համեմատաբար անվտանգ թաղամաս է: Տանտերը՝ համակրելի տարեց ամերիկացի: Անունն է Էնդրյու Կովալենկո…»:

Մինչեւ ամառ մնացինք Ավստրիայում: Վիեննան միջանցիկ փուլ էր Լենինգրադի ու Ամերիկայի միջեւ: Հավանաբար այդպիսի տարածությունը հնարավոր միայն երկու ցատկով հաղթահարել:

Վերջապես ստացանք ամերիկյան փաստաթղթերը: Յոթ ժամն օվկիանոսի վրայով ինձ հավերժություն թվաց: Տարածության մեջ, որպես այդպիսին, չափազանց քիչ հետաքրքրություն կա:

Ինքնաթիռն ամերիկյան տարածք էր: Ուղեկցորդուհիներն իրենց անկախ էին պահում:

Քենեդու անվան օդանավակայանում սպասում էին մեր բարեկամները: Նշանավոր լուսանկարիչ Կուլակովը՝ կնոջ ու որդու հետ: Ողջունելով՝ անմիջապես սկսեցին փնովել Ամերիկան:

«Տոյոտա» կառնես, ծերո՛ւկ, ասում էր Կուլակովը, իսկ ավելի լավ է՝ «Ֆոլքսվագեն»: Ամերիկյան մեքենաները զիբիլ են:

Ես հարցրի .

Իսկ ո՞ւր են Լենան ու Կատյան:

Կուլակովն ինձ տվեց երկտողը .

«Տեղավորվե՛ք: Մենք առողջարարական ակումբում ենք: Կգանք ժամը ութի կողմերը: Ուտելիքը սառնարանում է: Լենա»:

Գնացինք տուն՝ Ֆլաշինգ: Շրջակա հորիզոնական բնապատկերն ասես Մոսկվայի կայարանի շրջոնքը լիներ: Երկնաքերները բացակայում էին:

Մայրս դուրս նայեց պատուհանից ու ասում է .

Լրիվ դատարկ փողոց…

Փողոց չի, առարկեց Կուլակովը, հա՛յվեյ:

Ի՞նչ է նշանակում հայվեյ, հարցրեց մայրս:

Մեծուղի, պատասխանեցի ես:

Լենան զբաղեցնում էր ոչ բարձր աղյուսաշեն տան առաջին հարկը: Կուլակովը օգնեց՝ ներս տանենք ճամպրուկները: Հետո ասաց .

Հանգստացեք: Եվրոպայում արդեն գիշեր է: Իսկ վաղը կզանգեմ…

Ու գնաց:

Իհարկե, չէի սպասում, որ ամերիկյան գրողների պատվիրակությունը կդիմավորի: Բայց գոնե Լենան, մտածում էի, կարո՞ղ էր գալ օդանավակայան…

Մենք հայտնվել էինք դատարկ բնակարանում: Երկու սենյակներում հատակին ներքնակներ էին: Շուրջբոլորը հագուստ էր թափթփած:

Մայրիկը բացեց սառնարանն ու ասում է .

Պանիրը համարյա նույնն է, ոնց որ մեզ մոտ…

Հանկարծ անտանելի հոգնություն զգացի: Պառկեցի ծածկոցի վրա ու սկսեցի ծխել: Իրականության ուրվագծերն անգթորեն աղոտանում էին:

Ո՞վ եմ ես ու որտեղի՞ց: Ի՞նչ է կատարվում մեզ հետ: Եվ ինչո՞վ կվերջանա այս ամենը…

Նոր կյանքը չափազանց շարքային էր թվում մեծ փոփոխությունների համար…

Ու նաեւ մտածում էի .

«Ինչպե՞ս է ծագում մարդկային մտերմությունը: Ի՞նչ է պետք մարդկանց՝ հարազատություն զգալու համար…»:

Արթնացա վաղ առավոտյան: Պատուհանից այն կողմ օրորվում էին ճյուղերը: Կողքիս մարդ կար: Հարցրի .

Ո՞վ է:

Լենան, պատասխանեց հանգիստ կանացի ձայնը:

Ու շարունակեց .

Ո՛նց ես չաղացել: Առավոտները պետք է վազել:

Էլ վազելու տեղ, ասում եմ, գործնականում չունեմ… Կնախընտրեի էստեղ մնալ: Հուսամ՝ կարելի՞ է:

Իհարկե, եթե մեզ սիրում ես…

Գնդապետն ասում է՝ սիրում եմ:

Սիրում ես, ուրեմն մնա: Մենք դեմ չենք…

Սե՞րն ինչ կապ ունի, ասացի ես:

Հետո ավելացրի .

Սերը դեռահասների համար է… սա սեր չի, այլ՝ ճակատագիր… Ի դեպ, ո՞ւր է Կատյան:

Ներքնակին, տատիկի հետ…

Հետո Լենան ասաց .

Շրջվի՛:

Մռութս ծածկեցի ամերիկյան թերթով:

Լենան վեր կացավ, հագավ խալաթն ու հարցնում է .

Քեզ թե՞յ, թե՞ սուրճ:

Այստեղ հայտնվեց Կատյան: Բայց դա արդեն ուրիշ թեմա է: